ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ <<ՀՀՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-2022/6>>

ծածկագրով ընթացակարգի

ք. Իջևան <<10 >> նոյեմբերի 2022թ.

Ժամը 10:00

Մասնակցում էին.

Ռ. Տիգրանյան - Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության վարչության պետ

Լ. Քամալյան - Հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության վարչության գլխավոր մասնագետ

Ն. Քամալյան - Հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության վարչության ավագ մասնագետ

Ա.Մանգասարյան - Հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ

<<ՀՀՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-2022/6>> **ծածկագրով** մրցույթի շրջանակներում ստացվել են հարցումներ և պարզաբանումներ.

1. <<Հարգելի գործընկեր, ՀՀՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-2022/6 ծածկագրով ընթացակարգի հրավերի 3-րդ չափաբաժնով սահմանված է սրտագրման սարքեր (կարդիոգրաֆներ) 12 կանալանի ՎՆ 1 հատ, որի հրավերով սահմանված գնման գինը 261000 դրամ է: 12 կանալանի ԷԿԳ-ի շուկայական գինը 261000 դրամ ընդհանրապես չի կարող լինել: Ամենայն հավանականությամբ, Ձեզ մոտ շփոթմունք է տեղի ունեցել: Տվյալ դեպքում խնդրում եմ պարզաբանել, արդյոք ընդունելի է հրավերով սահմանված 12 կանալանի ԷԿԳ սարքի փոխարեն 1 /մեկ/ կանալանի ԷԿԳ առաջարկելու/ներկայացնելու/ տարբերակը, քանի որ 12 կանալանի ԷԿԳ-ի գինը չի կարող լինել 261000 դրամ: Կանխավ շնորհակալություն:>>

Գնահատող հանձնաժողովը վերոնշյալ հարցմանը տվեց հետևյալ պատասխանը.

1. Ի պատասխան 2022-11-09 12:59:42 ստացված հարցման, կատարել Հրավերի փոփոխություն՝ համաձայն Իջևանի ԱԱՊԿ ՓԲԸ-ի կողմից ստացված փոփոխված տեխնիկական բնութագրի, որտեղ հանվել են մի շարք սահմանափակումներ:
2. Հրապարակել Հրավերի փոփոխության մասին հայտարարություն:

ստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Տիգրանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Քամալյան

Ն. Քամալյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանգասարյան